

ՊԱՏԻՈՅ ԱՏԵԱՆ

Հիմա ալ այս աղածգական խոսքին շուրջն է որ կրկին գորգային համբերգով խորհրդագրելով վերջուկ մը յուզել սկսած է յեղափոխական միջնուլորտը:

Յեղափոխութիւնը սպուն ուսերուն վրայ ընկնում էն հայտնութեան ապագան խարխուղ ընդունելու կենսական հարցերը: Կերպար քաղաքական խառնակ ու փոփոխելի կայուն թեւոր մէջ աւելի վարժած ու շարժու թեւոր հետեւելու է իր նպատակի կրթողութեան, առանց փոքրիկ յեղում մը խեղճելու: Ասկան խորհրդեր զիտու մեծրով մարդիկ յեղափոխութիւնը ճապարկեցնելու է իր առանձին սահնցընելու ոչ մի գոհողութիւն ու փորձ խնայած են մինչև հիմա:

Միութեան զիմակաթափ ու շահագործական հարցէն յետոյ՝ որ ժամանակ մը արտասանմանի հայտնութիւնը իրար անցուցած էր, յեղափոխական բնութիւն վրայ սերիչ նոր գոծէտի մը կը ներկայացուի — մի ինչ որ Վերաբանիչ Ատեանի հասարակական կոչելով: Ինչո՞ւ, որովհետև Գաշնակցութիւնը իր ամենախիստ պատժին ենթարկել է Պոլսոյ խմբագիր մը, որ «անզուգական տաղանդաւոր գերագէտի ու քաղաքագէտի» մեծ համբաւը կը վայելէ եղեր կտր, եւ որը մի միայն զրպարտութեան մը զո՞ն կը նկատուի, առանց զրբական ու ճշմարտախոս փաստերու ?

Գանի որ ժողովուրդի անունով Պատուոյ Ատեան, Արդարութիւն պահանջող ձայները մարդկութեան սահմանած ազատ ու արդարադատ օրէնքներու սերիչ եւ անյուզ գործադրութիւնը կուզեն, տեսնել օրինակ բերելով ազատ երկիրներու մէջ գոյութիւն ունեցող Գատարաններու կազմը, եւ կը պահանջեն Յեղափոխական կազմակերպութեան առած պատժական վերձիւր բեկանելու զայն ինչ որ Կերպար Ատեանի մը որոշումներուն հպատակեցնելու է: Եւ քանի որ այդ արտոնքը լուրջ կարգապահութեամբ ձեռք առած է, ուստի մենք պիտի ջանանք կարելի եղածին չափ պարզելու թէ՛ ինչ է յեղափոխական մարմին մը — թէ՛ ինչ են այդ տեսակ ատեանները, անոնց գերը ու գործնական նշանակութիւնը եւ թէ՛ Յեղափոխական մարմին մը արդեօք պարտաւոր է խոնարհիլ ու ճանչնալ ու է ատեանի մը բարձր իրաւասութիւնը եւ իր վճիռը կրնայ վերաքննութեան ենթարկուիլ եւ վերջապէս Ա. Արքիարեան յանցաւոր է թէ ոչ:

Միւսնոյն ժամանակ պիտի աշխատին ճիշդ հրապարակի նիւթ եղող յարակից հանդամանքներու նուրբ ծալքերը բանալ ու ենթարկել մանրակրկիտ քննութեան:

* *

Յեղափոխական Մարմին մը իր գոյութեան հիմերը ժողովրդի սրտին մէջ ամրացուցած՝ բռնութեան եւ անարդարութեան տակ ճնշուող ժողովրդին պաշտպանը կը հանդիսանայ ու զեղծութիւնը ջնջելու զաղափարը կը մարմնացնէ: Նա ժողովրդին մարդկային բոլոր իրաւունքները պաշտպանելու եւ վերականգնելու համար ինքզինքը բացարձակ կերպով

կազմակերպելու Ապտամբ մարմին կը յայտարարէ որ իր ամեն միջոցներով զիմազրուէ ու մարտէ տիրող կառավարութեան բռնակալ ուժին դէմ: Երբ իր առաջադրած նպատակը ամբողջ ազգի մը իղձը ու փափաքը կը ներկայացնէ, այն ժամանակ ազգը կը յարի այդ գաղափարին, կընդգրկէ զայն ու նիչ մարմնոյն շուրջը կը հաւաքուի:

Մեր յեղափոխութեան հետապնդած նպատակը ոչ փոքրաթիւ հայերու եւ ոչ ալ ներկայ երիտասարդութեան խանդավառ երգանքն է, աչք սերնդէ սերունդ փոխանցուած ժառանգութիւն մը, որուն պահպանութիւնը, հողածութիւնը անհատն անհատ սուլանդուելով՝ վերջապէս զօրաւոր մարմին մը ձեռքը կը կերտանանայ, որ զայն կընդունի երջանիկ աղաւտութեան հանգրուանը հանցնելու համար:

Այդ մարմինը ազգի արքանդէն ծընած, անոր արիւնովը սնած եւ անոր սէրը ու հաւատքը իր դաւանանքին մէջ մարմնացուցած՝ գերութեան շղթաները կընդ ժողովրդին Առժամանակեայ կառավարութիւնն է:

Գաշնակցութիւնը մինչև հիմա փայլուն ապացոյցներ տուած է որ ինք հայ ժողովրդին սրտին, հոգուն ու մտքին ցոլացումն է. ու այդպէս ճանչցուած է ոչ միայն հայն ու օտարներէն, այլ եւ հայտնութեան Գահիճ-Սուլթանէն որ միայն այդ մարմնոյն զիմեց բանակցելու ընդունելով զայն հայ ժողովրդի անասան կամքը միակ ներկայացնողը:

* *

Բոլոր քաղաքակիրթ ազգերու յեղափոխական պատմութիւնը անժրեական օրինակներով ցոյց կուտայ թէ՛ երբ յեղափոխական մարմին մը տէր դարձած է իր զերթին եւ իր ուղղութեանը, նա իր գործունեութիւնը կամ արարքը վերահսկողութեան կամ վերաքննութեան ենթարկելու հակամէտ չէ եղած:

Յրանաական մտքերը, երբ արեգակրական յեղափոխութեան հրարուխեթանքը կը պատրաստեն, մուցած չէին եւ այն հանդամանքը որ հրարուխեթանքը արձանագրուէր եւ հրապարակուէր, այլ իր շուրջը գտնուածը այրէ, լափէ ու իրեն համար ճանապարհ բանայ:

Այդ աշխարհագրորդ յեղափոխութեան կերտողական փայլուն դէմքերը, Մարա, Տանթօն եւ Ռոպէրտէտ աւերող ձեռնարկներուն արձանագրութիւնը պահող յեղափոխական մարմինն վերուրիչ հեղինակաւոր իշխանութիւնն է: Եւ քանի որ օրէնքներու պահանջներն, բնական օրէնքներու պահանջներն, վերապահող յեղափոխութեան անկաշխարհ ու անձեռնմխելի մարմին մնալու հարկը:

Յեղափոխութեանը տեսական ու գործնական ուղղութիւնը սուղ ու այդ թագաւորութիւններ տապալող թէօրիսի ստեղծողները 18րդ դարու վերածնութեան տաղանդի ծաղիկներն էին. իրենց մէջ կը պարփակէին փիլիսոփայութեան ու իրաւագիտութեան բարձր մտքերը՝ որոնք ուղղեցոյց եղած են արդարութեան գիտելու ժողովրդի ժողովուրդներուն:

Գամիլ - Տէմուլէն, երբ խոփանք կուզէր զսպիլ իր կրակաւ ճառովը այսպէս կը խօսի «Եթէ հանդիստ ըլլայիք ձեր աշխի վիճակի մէջ, յեղա-

փոխութիւնը չէր կրնար ընդամաւորիլ ու ուժանալ. բայց անասնական վատ կեանքը անոր հոգի տուած է. ձեր դժգոհութիւնը ու սառագանքը միայն նա լրտած է ու սրացնելով բարձրացած. նա ձեր ծոցէն էր ու արիւնէն, նա է Յրանաայի զաւակներու գերագոյն իշխանութիւնը, ուրեմն միայն անոր սրտումնեւրուն համակերպելու էք»:

Նոր ու ժամանակակից պատմութիւնն ալ կրնանք շատ օրինակներ քաղել, ուր յեղափոխութիւնը ընդգրկող ազգերը զայն վարող մարմինը իր Առժամանակեայ կառավարութիւն ճանչցուած են: Բոլոնիական, Բուրսական, Յունական ու Պարսկական ազգերու ապտամբական շարժումներու միջոցին այդ աւելի նկատելի եղած է: Նա աւելուրդ ու անբարագործելի սկզբունք մըն է այդպիսի մեծ կոչում ու գեր ունեցող մարմինը խոնարհեցնել ինչ որ պատուոյ ատեանի մը առաջ: Պատուոյ ատեաններու նշանակութիւնը չնչն է, թէև դատական հաշտարար գրքի առաջին կայարանն է: Բայց անոր գործունեութիւնը կը սահմանափակուի անձնական ու ընտանեկան բնոյթ ունեցող խնդիրներու լուծումովը կամ անհատական անհամաձայնութիւններէ առաջ եկած վէճերու իրադարձովը, որոնք մեծ մասամբ թլերմացութեան արդիւնք են եւ բնական զերութիւն կընծայեն կարգապահութիւն:

* *

Արդարութեան դէմ անհեթեթ սրբապղծում մը գործուած կըլլայ երբ ազգի կամքը եւ իղձը ներկայացնող յեղափոխական մարմին վճիռը առ ոչինչ համարուելով ինչ որ ատենի միջանձնուի վերաքննել: Այդ իրաւասութիւնը ոչ մի ատեանի տրուած է: Եւ ստոր մէջ համազուտու համար լաւատրեմք թէ Գաշնակցութիւնը իր օրէնքներէն Արքիարեանը պատժուելու:

Այս հարցը տարբարուծելէ առաջ մի քանի դատական հարցումներու ուրոյն պատասխանը դժեմ է:

Գաշնակցութիւնը երբ դատապարտեց Արքիարեանը, ո՞ր դատապարտեց եւ ինչո՞ւ դատապարտեց:

Այս իրար բռնող դատական օղակներն են որ կանոնաւոր վճիռ մը օրինական զրոյնով կը վաւերացնեն:

Նախապէս յիշատակենք որ դէպքը Պոլիս կը պատահի, երբ յեղափոխութեան գրգռը կը ծածանայ: Ազգը վրաստահար յեղափոխութեանը փարած դարեւոր բռնութիւնէն իր իրաւունքները ետ խլելու միակ ճամբան զէնքի ոյժը կը գտնար. ազգը յեղափոխութեան հորիզոնի վրայ իր երջանակութեան ստողի փայլը տեսնալու յուսոյ եւ հաւատքի մէջ էր... եւ յանկարծ ազգակործան ձեռք մը ազգին անունով ազգին դահիճին հաւատարմութեան կրախառնածոն մը կը նուրբէ, ու աւաղակային սէժիթի Գիթաատութիւնը յանձին վիճ. Սուլթանին կը մարմնացնէ, կերպէ այդ ճիւղակին բարի գործերը եւ երջանիկ կը համարէ հայ ազգը որ Ատանի Հօր մը խնամքին տակն էր:

Այս գրութիւնը կարեւոր հայ լրագրին մէջ ցերեպտեպտեպ հայ մամուլը: Գաշնակցութիւնը որ հայ ժողովուրդի կամքը արտայայտուէ իրաւունքը կը վայելէր, չէր կրնար անտարբեր մընալ, երբ լոկ անհատ մը յանուն ժո-

ղովրդի՝ գերութեան հրաւեր կը կարգար:

Սահմանադրական երկիրներու մէջ՝ անհատ մը ժողովրդեան կողմէ չի կրնար ներկայանալ սուանց առժամանակեայ կամ տեսական մարմնոյ մը աշակցութեանը, որովհետև այդ քայլը առնելու համար պէտք է կամ միութիւնի մը որոշումը, կամ հանրագրութեան մը: Իսկ մամուլը առանձին այդ իրաւունքը կրնայ ունենալ երբ քաղաքական կուսակցութեան մը պաշտօնական բերանն է:

Եւ որովհետև այդ անհատը ինքն իրեն յանդգնած էր ժողովրդին ճակատագրին հետ խաղալ. ուշք չը դարձնելով յեղափոխական մարմնոյն յորդորին, եւ մինչև իսկ զայն անարգած է, ուստի Յեղափոխական Դրօշի Բրէնթիթը ու բանակի պատիւը կը պահանջէր, մահով պատժել, քանի որ դաւաճանութեան սճիւր մը արգէն գործած էր:

Ամեն բանէ առաջ պիտի ընդունինք որ յեղափոխական կազմակերպութեան մը ամբողջ կեանքը եւ նպատակը իրեն ուժով կապահովագրուի. նա զինուորական լիազօր իշխանութեանը դրանք կը հագնի իր անուղութեանը մէջ եւ իր խորհուրդները, որոշումները ու վճիռները պատերազմական ատեաններու անբակակեր իրաւասութիւններու ուժը ու ազդեցութիւնը ունին: Զինուորական օրէնքներու ըսկըզրուանով, երբ պաշտօնապէս «պատերազմական գրութիւն» (էթա առ սիէթ) կը հրապարակուի եւ կրկու ազգերու միջև թշնամական յարաբերութիւնները կրկին — հրամանատարներուն լիազօր իրաւունքները կը տրուին զինուորական կարգը պահելու ու զինուորը զսպելու անհրաժեշտութեան տախտակ: Այսինքն հրամանատարները կարող են ամենախիստ պատիժներ տալ, առանց ուր է բարձրագոյն իշխանութեան թոյլտուութեանը սպասելու եւ անոնց որոշումները չեն ենթարկուիլ վճռալինչ ատեանի մը իրաւասութեանը:

Պոլսոյ Գաշ. Կերպ. Կոմիթէն թաւրքիոյ մայրաքաղաքին մէջ հայ ազգին զինուորական մէկ մարմինը՝ կը ներկայացնէր եւ իր պարտականութեան տանմանին մէջ յեղափոխական կարգապահութեան անողորմ պահանջին հնազանդելով՝ Արքիարեան դատապարտած է:

«Պատերազմական գրութիւնը» յայտարարուած էր կրկու ազգերու միջև: Սուլթան իր հանահապետներուն եւ դաւաճապետներուն լիազօր իրաւունքը տուած էր ամենայն խտուութեամբ, որքանին մէջ խեղդել ամեն մի ապտամբական երեւոյթի Հայաստանի մէջ. հայու համար օրէնք եւ արդարութիւն չկար. առանց դատաստանի ան կաշտորուէր, մահով կը պատժուէր եւ կը բանտարկուէր. ու ամեն մի տանջանքի կենթարկուէր:

Այդ պայմաններու մէջ Գաշնակցութեան Պոլսոյ Կ. Կոմիթէն յանուն օրինաց ամենախիստ կերպով վարուելու իրաւունքը ունէր:

Յեղափոխութեան սկզբունքներէն մին է Մամուլը իր գրքին մէջ բարձր պահել, որպէս զի ան կառուցարարութեան ձեռքը անարգ գործիք չըլլայ: Մամուլը դաւաճան եւ ժողովրդեցուցիչ ուղղութիւն անուրուն պէս յեղափոխութիւնը իր կոչա ուժով կը միջամտէ այդ դաւաճանական ուղղութիւնը կատեցնելու համար: Մակե-

դոնական Բ. Կոմիթէն Պոլիս հրատարակողը պատկարհին «Եօլի» թերթի խմբագրը, Վ. Մակրոնովսկին մահուամբ պատժեց, անոր մէկ քանի յօդուածներէն համար, որոնք ազգը յեղափոխութեան գրկէն դատելու ներշնչութիւն տրուած էին: Ա՛յ, բուրդոքեց. ինչո՞ւ Մակրոնովսկին հարցը չը յուզեցին, թէև սպանուող պուլկարիտայտագրութեան դատին կարևոր դործիչներէն մին եղած էր:

Չը բողոքեցին, որովհետև սկզբունքով այդ սեռակ գրութիւնները յեղափոխութեան հիմերը խաղտելու նպատակը ունին ու Մակրոնովսկին Կոմիթէն Մակրոնովսկին յօդուածները իրեն գէ՛տ ուղղուած նետեր ընդունելով՝ զանխմահուան դատապարտեց:

Նոյնպէս Իսպանացի իր հոգեւոր, գերբ, զինքը բռնադատող ու չըջուպատող հանրամասնները, օրէնքը եւ սովորութիւնը կարգաւորանքն իր քայլը: Արքիեպիսկոս ինչ ունի ըսելիք եւ ինչո՞վ կրճէ թոթալ իր մեղապարտութիւնը, երբ ինքնաբերական պատուոյ ասեան կատարելէ:

Իսպանական սթաթիսթիքները կը վկայեն թէ յաճախ վարպետ ոճբագործները արդարութեան ճիւղաններէն խոյս տուած են, որովհետև օրէնքի ձեւակերպութիւններու հետ ծանօթ ըլլալով՝ խոհուն ծրագրերը պատրաստած են ոճբագործութիւնէն յետոյ արդարութեան ձեռքը շօշափելի հեղքեր եւ փաստեր չը ձիւլու համար. եւ յաճողած են ոչ միայն իրենց վրայէն ստրատանութիւնը նետելու, այլ եւ դատարանէն պատիւ պահանջելու:

Արքիեպիսկոս զինքը անպարտ ցուցնելու համար, շատ կարելի է որ հետեւեալ ցուցմունքները յառաջ բերէ: Եւստի ինչ թէ ինք, գէպերու բերումը, անհասական ու կուսակցական աններգայնակ, անհաշտ եւ իսկակալ տրամադրութիւններու եւ ուղղութիւններու միակ գործ եղած է. թէ ինքը յեղափոխական գործունէութիւնը խնդրուեալ եւ անհնար գտած էր, ազգը անդունդի մէջ գործուելու վտանգէն փրկել փորձած էր. թէ անզը ինքնազմայան կը շրջալիքը եւ վերջապէս իր մեղապարտ անարժէք բան մըն է. երբ ըստարկութիւնը զինքը բռնադատուած էր գրելու, թէ իրեն Եօլի թերթի կատարման հետ մտերմանալով ազգը պիտի օգտուէր, պիտի կրնար դաշտնիքներ կորզել. թէ ինքը խորին դեւանդութեան ձեռնարկ մը արած էր, որուն պատուները քիչ օրէն իր սիրելի ազգին պիտի ընծայէր. թէ «Իրօչակ» ի յաւելումը ինքնու ժամանակով հաւաքածոյ մըն է, անմտոյ կենդանի ապաշոյջներու շրջի կուսակցական նախանձի արդիւնք:

Որոչ փնք գիտեր թէ այդ մաքիսականութեան խոտովանութիւնը զինքը քաղաքագիտութեան որ պարտքին պիտի յատկացնէ, եթէ իբր անհերքելի սկզբունք ընդունինք որ դիւանադատութեան զգալի ամեն քանէ անաջ հետադարձ ըլլալու է, մանուածապատ եւ մշտնապատ գէպերու ուղղութիւնը խմորումէն եւ ծագումէն առաջ կը գուշակէ եւ ճամբան կորոչէ, ինչո՞ւ ինքը, եթէ համոզուած որ կայսրութեան զօրքովան մէջ հայն ալ բաժին ունէր, զեւ կանուխէն Ներքուկան ազգայնական մը չը փախաւ եւ այդ քաղաքագիտութեան նորարձակութիւնը չեղաւ. իբր գիտելի ազգին ծագումնական մատուցանելու համար:

Այլ փոքր մէկ ալ անհրաժեշտ է որ նախընթաց հետ ունեցած մտորութիւնը

ազգայնական հետեւանքներ չունենար. որովհետև հիմա տղաներն ալ գիտեն թէ կատարութիւն մը մինչև որ պետութեան համար շօշափելի օգտակար ծագումնական չը տեսնայ, անկարելի է որ նազքով եւ Արքիեպիսկոսութեանը անտեսէր. ու թոյլ տար որ տաղանդաւոր դիւանագետ հայ մը ազգայնական պաշտօնեայ մը իր ձեռքին տակը տնենար:

Սուլթան Համիտ փորձով ցոյց տուած է թէ ինք եղած է լրտեսական դարձելու ստեղծող ճանկատանի մէջ, ուրիմ շատ ապուշ տրամաբանութեան հետեւած ըլլալու ենք, եթէ հաւատանք, ինչպէս Վերակազմութեանը կը վկայեն, թէ նազքով Արքիեպիսկոսութեանը գործիք եղած է:

Գրեթէ դժուար է առաջ բերել այնպիսի մեղադրանքի պարագաներ ուրոնք Արքիեպիսկոսութեանը քիչ մը ստուերտէն. որքան որ իր համակիրները իրեն հեղինակութեան եկալիք տան ու զինքը բարձրացնեն գործիչի, գրագետի, յեղափոխականի ու քաղաքագետի աստիճաններու վերայ, այնքան իր պատասխանատուութիւնը կը ծանրանայ ու օրէնքի խնդրատուութիւնը կը սաստկանայ:

Մի ուրիշ փաստ. Արքիեպիսկոս իր անկեղծ յեղափոխական ըլլալը ինչո՞վ պիտի հաստատէ: Ասոր ժխտական պատասխանը Մարտի եւ Նոյնի մէջ տիրող ոգին կրնայ ապացուցել եւ ճշմարտախօս վկայագիր մըն է անոր հետամտած մտքի նպատակներուն:

Հնչակեան կուսակցութիւնը անդամանալէ եւ անոր բեկորներուն վերայ Ազգային Փրկութեան Կեդրոնը հաստատելէ յետոյ, Արքիեպիսկոսը քաղաքային աճող զարմուց Դաշնակցութեան գէ՛տ, ուղղակի զայն քանդելու համար. ազգի գաղտնագետ գործարարութիւններու միակ պիտաւոր պատասխանատուն Դաշնակցութիւնը կը համարէր եւ որոշ չէր հայ յեղափոխութեան գէ՛տ կուլ յայտարարող ո՞վ էր. հայը թէ Սուլթանը:

Արքիեպիսկոսը հայութիւնը որ կարգ մը բազմաթիւներու ձեռքով ջարդերու ու կոտորածներու մէջ սրբախորհող եղաւ. անոր բացատրութիւններով «Օսմանեան պետութեան յոռի վարչութիւնը ու մահմանական բռնադատութեան այդ պետական շանքներուն փնտախար քայլին մէջ յառաջանալու» է. եւ պատարակելին այն է որ Մարտի մինչև հիմա կը գովամակի հայր Դաշնակցին անունը առաւ, որ հայութիւնը հնձեց եւ զայն նախճիրներու արձանատու ճանչնալ միշտ «Օսմանեան պետութիւն» կը յորջորջէ Մարտի. Սուլթան Համիտ անձը իբր վերակազմութեանը անմեղ մտաւոր եւ սուրբ է Մարտի խմբագրիներուն համար, որովհետև Արքիեպիսկոսութեանը մինչև գերեզման իր վերակազմութեան ամենախոնարհ եւ հաւատարիմ ծառան մնալ:

Ամենապարզ մարդն անգամ հիմակ հասկցած է թէ կոտորածները Սուլթանի հրամանով եղած են, հայկական անկիւնները սպանդանոցի վերածուած են Սուլթանի անմիջական գիտակցութեամբ ու անոր կառնովը ստորիներու. եւրոպական լրագրիչները ժամանակին շատ ճշգրտութեամբ վկայեցին թէ նախարարութիւնը դիմադրած է Սուլթանի որոշումներուն, որ աւելի բացայայտուած է Սուլթանի քարտուղար Սուրէյա փաշայի յայտնութիւններէն. հետեւաբար Մարտի ընդունած թուրք կատարութիւնը անբարտանելու ձեռք, շատ անգոր եւ շատ ծիծաղելի է: Թուրքիա միայն

տական երկիր է եւ իր վարչութիւնը աւազակային Թուրքիա բարբառանդական օրէնքներով չի կատարուել, որ Արքիեպիսկոս Օսմանեան պետութիւն անունով կը մեծարէ:

Ինչո՞ւ Մարտի խումը կը ձեւանայ, նոյն իսկ «Մէլիթիթ» ի ազգայնականներն ալ չի բեր:

Մարտի գիտամբ այդ ձեւը կը գործածէ, որովհետև Սուլթանի անձին հետ մերկացումներու օղակներ կան չգլխաւոր: Ինչո՞ւ մեղադարձի մէջ Սուլթանը թուրքիոյ շունչը ու ոգին ըլլալու գերբարկային ու աստուածային էութիւնը կատանայ, իսկ հայկական կոտորածները միջոցին մատար մը պատասխանատու կը ըլլայ, ոչ ինքը, այլ «Օսմանեան պետութեան յոռի վարչութիւնը»: այս պարական լարախաղացութիւնը ինչ նպատակաւ է:

Անկեղծ հայը շատ դիւրաւ կրնայ ըմբռնել ասանց իմաստը: Որովհետև այդ ստղերով թագուած է Մեծ Մարտի պատկանին անձը պաշտպանելու փափուկ պաշտօնը:

Մարտի հրատարակութիւնը ի վեր այս պաշտօնէն չէ շեղած եւ Սուլթան Համիտի փաստարանն է եղած:

Ինտութիւնը լաւ կանոնաւորած է իւր ընթացքը. ինչպէս որ աշխատանքներու արժանաբար կը փութայ երկրի բուսային պատմութեան աննիլ ու իրերը իրենց իրական գոյններով ներկայացնել, այնպէս ալ ժամանակը պիտի գայ որ հայը պիտի հիասթափուի ու պիտի սահմակի այն մտքացումներու առաջ ինչ որ երկունքի մէջ եղող ազգային փրկութեան կեդրոնի օսկան Մարտի սարսուղութիւնը գուհանքի պատկերներ պիտի ցոյց տայ:

Ինտութիւնը ծածուկ բան չի սերբեր: Երեսով ամեն հայ պիտի համոզուի որ ինքզինքը ազգային յեղափոխական հոգեկոչ Մարտի յեղափոխութիւնը հեղինակու համար է որ «ՄԱՐՏ» անունը կը կրէ: Թէ նա գաւթի ու զոհի միջև միջնորդը պաշտօն կը կատարէ ու աւելի Սուլթան Համիտի մէջ գործակալութիւնը է որ մեր ներքին կեանքը կը լրտեսէ:

Մարտի նախուն ու ճամբարակ, քաղաքային հրատարակչի խօսքերով կուղէ ափիսի թմբեկուցիչ ու թուրքի սպարակը խմցնել փոխանակ կենսատու էլէքիթի:

Թրքական շողմարար ոճով շարախուած, խէժածիք ու ճրտումահիւս պարբերութիւններով, երբեմն բարեհոգութեամբ ծրագրերով, երբեմն հայկական խոհուն քարոզներով հայ ազգի վերքերը ամոքելու համար գերազդիները կը պատրաստէ. երբեմն ալ չի մոռնար վերջիներու իր սիրելի ազգին իր հին երգի ու լեզուները «Եթէ բարեհոգութեամբ ի գործ դրուէին հայ ազգը պիտի համոզուէր որ Օսմանեան պետութիւնը հայ ազգը ընաշնջել չէր ծրագրած» (Մարտ 99 հոկտ. թիւ). բնաւ իր նպատակէն չը խոտորելու, նա ծածուկ, ամեն մի պարբերութեան թուրքի ներքեւը կատարելու թուրքի ներքեւը կատարելու:

Ազգային փրկութեան կեդրոնին այս ծրագիրը յաճողութեամբ կը լըրացնէ իր երկրորդ օսկանը՝ Մարտի որ հայ գրականութիւնը ողորկուելու կը ջանայ:

Այնուհետ ճաշակով ու խնամքով կը ջանան վէպերու ու հեքիաթներու մէջ ծագրական գէ՛տներով հեղինակ յեղափոխութիւնը, անոր հետեւողները իբրեւ պարծենկոտ, թէ ինքնաբերական անպէտք

եւ բազմաթիւներ տարբեր ներկայացնելով:

Որչա՞փ ստոր գեր կատարել ըստանձնած է Ազգային յեղափոխականներու Օսկանը:

Ասանց նման փնտրանքներով ինչներու մէջ մտնելը գուցէ զմեզ շատ հետու տանէր: Մանաւանդ երբ Վերջի յանձնուածն ալ կայ:

Մեր վերջիները փաստերէն դիւրին է եղրակացնել թէ Պատեոյ Ատեանի մը առջև յեղափոխական մարմինները վճիռներու վերաբնումը խաղաղ կը ջանալուէ անոր դորտութիւնը եւ հեղինակութիւնը: Ապա մարտի 21-ին փետրուարի 2-ը ոչ մի անտեսան կրնայ չի լինի թէ Դաշնակցութեան վճիռն իր օրինակներն ունենալով մէջ էր որովհետև այդպէս կը փնտրանքներն հայրենիքը չա՛նէրը եւ յեղափոխութեան Երօշխ ու Բանակի պատերա՞ թէ Արքիեպիսկոսութեան անհոգ ու դատապարտող դատասխալը նոյն ինքն Կենդանի յեղափոխութիւնը հեղած է, որուն պատժական գործարարութիւնը մարմնացուցած է Պոլսոյ Դաշնակցութեան կեդր. կոմիթէն: Ինչ կայ երկու անգամ հայրենիքը հսկող բարձրագոյն իշխանութիւնը կը պատկերացնեն:

Ուստի ոչ ոք իրաւունք չունի հայրենիքին սու զաւանձանքներն ունի խաղաղ դրոշմով դատաւճիռը ջնջել: Հայրենիքը կը վարձանորէ միայն իր անձնուէր դատակները, որոնք ազատութեան Դրօշը եւ ազգի պատերա՞ իրենց արեւնէն աւելի սուղ կը զընահատեն եւ զայն թիշամիլի առջև անաղարա կը պահեն:

Ու յեղափոխական այդ դրօշին տակ ապրող, մինչև վերջին շունչը առանց խոհարհելու կուտող յեղափոխական բանակը որ իր շարքերէն հայրենիքի փրկութեան գործին ընտիր զոհեր տուած է, որոնց լուսափայլ հոգիները կը թռնան ամբիժարօրէն շուրջը եւ իրենց չաւիղէն դադողունութեան կը յիշեցնեն Հայրենիքի Դրօշը ամենապարտաւորութեամբ ինքը:

Ոչ հայրենիքը, ոչ ազգը եւ ոչ յեղափոխութիւնը կրնան ներքեւ Արքիեպիսկոսութեան գուցէ միայն կեղեկեցիկ սեղծ միջնորդութեան անպարտաւորութեամբ պիտի արտասուալի ինքնախոտովանութիւն մը ընէ եւ զղկայ Գուցէ միայն ան ասան «անաւարտ դրօշ» կրնայ գարնը ապառաջ վտանգներու, ոճբագործներու եւ նոյն իսկ մարտաբանական խաղաղութեան արեւոյ լուսնի ըսէ:

Պ. ԱՆԻՏՄԱՆԻ

Սօֆիա, 22 Ապրիլ 1900

Յ. Գ. — Կը խնդրենք հայ յեղափոխութեան նախանձախնդիր, համակիր ու անոր պաշտպան հայ մամուլէն որ անկողնակալ կերպով ուսումնասիրէ ներկայիս հայութիւնը վերոգող խնդիրները, այս գէպի ընթացքը ընթացապատող հանգամանքները, լաւ կը ընէ յեղափոխական մարմին մը կողմէն, առանց անոր մտերին վար առնելու զինուորական բաճկոնը եւ դատապարտուալի ներկայ գործունէութիւնը այս ծանօթութիւններու պայքարով եւ տեսներ թէ դարձեալ պիտի հաւանի պատեոյ ատեաններու հաստատուումով այս սեռակ խնդիրներ կարգադրել:

Նոյն